ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1262-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Լուսինե Դավթյան 26.06.2022 20:05:40	Կարող եք մանրամասնել ինչ է լինելու դպրոցում արդեն եղած բազմամասնագիտական խմբի հետ, և ինչ է նշանակում հատուկ մանկավարժ, լոգոպեդ և ..., - հատուկ դպրոցների դեպքում ըստ ուղղվածության և կարիքի ՝համապատասխան հիմնավորման և լիազոր մարմնի թույլատվության պարագայում նշումը	Շնորհակալություն հարցի համար: ,,Համապատասխան հիմնավորման և լիազոր մարմնի թույլատվության պարագայում,, ձևակերպումը նշանակում է, որ այդ հաստիքների հարցը պետք է լինի հիմնավոր և քննարկվի լիազոր մարմնի կողմից:	
2	Օֆելյա Սարդարյան	Բազմահամակազմ դասարանների նոր	Շնորհակալություն	

	26.06.2022 17:40:02	ֆինանսավորումը իրականացնել առավել շուտ,քան 2026թվականը,քանի որ շատ դժվար է աշխատել միաժամանակ երկու դասարանում ուժերի գերագույն լարումով,բայց վճարվել մեկ դասարանի համար:Ցավալի է,բայց իրողությունն այն է,որ նմանատիպ խնդիրների լուծումը հետաձգելը հանգեցնում է ուսուցիչների թվի նվազման:	առաջարկության համար: Բարձրացված հարցը նախատեսվում է կանոնակարգել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում քննարկման ներկայացված մեկ այլ նախագծով: Կքննարկվի այս նախագծում այն աներառելու հնարավորությունը:	
3	Օֆելյա Սարդարյան 26.06.2022 17:34:12	Ուսուցչի նվազագույն դրույքաչափ սահմանել ոչ պակաս,քան 150 000դրամը:	Շնորհակալություն առաջարկության համար: Ներկայումս գործում են ուսուցչի աշխատավարձի բարձրացման այլ մեխանիզներ:	